## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունիսի 2022 թվականի N 963 -Ա

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով և 213-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում առաջադրել Սեդա Սաֆարյանի թեկնածությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 01/09.1/21057-2022**

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ  ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջադրված թեկնածուի տվյալները և վերջինիս վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր՝ «72» էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան, 2022 թ. հունիսի 30

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Սահմանադրական դատարանիդատավորի պաշտոնում ընտրվելու համաձայնության մասին**

Ես՝ Սեդա Սերյոժայի Սաֆարյանս, տալիս եմ իմ համաձայնությունը Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասին և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում ընտրվելու մասին:

**Ս. Սաֆարյան՝**

# ՍԵԴԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՖԱՐՅԱՆ



## ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծնված՝ 08.08.1962թ.,

sedasafaryann@gmail.com

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 1985-1991թ. | Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետ |
| 1979-1981թ. | Երևան քաղաքի Ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկում, աշխատանքի ուսուցման և գծագրության բաժին |

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

| | |
|---|---|
| 1991թ. մինչ օրս | ՀՀ փաստաբանների պալատի անդամ |
| 2015թ. մինչ օրս | Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի անդամ, «Հանցավորություն, արդարադատություն և ներքին անվտանգություն», «Դատաիրավական բարեփոխումներ» ծրագրերի ղեկավար, սահմանադրական և պետաիրավական հարցերի ավագ փորձագետ |
| 2009-2010թ. | ՀՀ Նախագահի 2008 թվականի հոկտեմբերի 23-ի ՆԿ-183-Ն կարգադրությամբ ստեղծված 2008 թվականի մարտի 1-2-ը Երևանում տեղի ունեցած իրադարձությունների պատճառների վերհանման և բացահայտման փաստահավաք խմբի անդամ |
| 2006-2007թթ. | ՀՀ Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան |
| 2008-2010թթ. | ՀՀ Փաստաբանների պալատի որակի հանձնաժողովի անդամ |
| 1982-1985 թթ. | Նոյեմբերյանի շրջանի (այժմ՝ Տավուշի մարզի Նոյեմբերյանի ենթաշրջան) Կոթի գյուղի միջնակարգ դպրոց, ուսուցչուհի |
| 1988-1990թթ. | Երևան քաղաքի Նոր Նորքի շրջանային գործադիր կոմիտեի սոցիալական ապահովության բաժին, տեսուչ |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ամուսնացած, ունի 1 որդի, 1 դուստր
- Ամուսինը՝ Սեյրան Ալբերտի Կյուրեղյանը, Արցախյան առաջին (1990-94թթ.), 2016թ. քառօրյա և 2020թ. 44-օրյա պատերազմի մասնակից և վետերան է
- Որդին՝ Կորյուն Կյուրեղյանը, 2020թ. 44-օրյա պատերազմի մասնակից է
- 2008թ. մարտի 1-ի իրադարձություններով քաղաքական հետապնդման ենթարկված մեկ տասնյակից ավելի քաղաքական գործիչների և անձանց շահերի ներկայացուցիչ ՀՀ-ում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ), 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին նվիրված 4 զեկույցների համահեղինակ, «2015թ. «Էլեկտրիկ Երևան» քաղաքացիական շարժման դեմ ոստիկանության ուժային գործողությունների իրավաչափությունը» զեկույցի համահեղինակ

# ԴԻՊԼՈՄ

ՓB-I № 012121

Սույն դիպլոմը տրված է Սեդա Սերյոժայի Սաֆարյանին

առ այն, որ նա 1985 թվականին ընդունվել է Երևանի Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարան

և 1991 թվականին ավարտել է նշյալ համալսարանի լրիվ դասընթացը

«Իրավագիտություն» մասնագիտությամբ։

Պետական քննական հանձնաժողովի 1991 թ. հունիսի 24-ի որոշմամբ տրված է Ս. Ս. Սաֆարյանին

իրավաբանի որակավորում։

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

Քարտուղար

Քաղաք Երևան «18» հուլիսի 1991 թ.

Գրանցման № 53267

Выдан нагрудный знак

# ДИПЛОМ

ФВ-I № 012121

Настоящий диплом выдан Сафарян Седе Сережаевне

в том, что она в 1985 году поступила в Ереванский орд. Трудового Красного Знамени гос. университет

и в 1991 году окончила полный курс названного университета

по специальности «Правоведение»

Решением Государственной экзаменационной комиссии от «24» июня 1991 г. Сафарян С. С.

присвоена квалификация юриста.

Председатель Государственной экзаменационной комиссии

Ректор

Секретарь

М. П. Город Ереван «18» июля 1991 г.

Регистрационный № 53267

Московская типография Гознака. 1989.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

# ՀԱՎԱՍՏԱՐՄԱԳԻՐ N5

ՍՈՒՅՆ ՀԱՎԱՍՏԱՐՄԱԳՐՈՎ ՓԱՍՏԱԲԱՆ

## ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆԸ

/արտոնագիր N116, տրված 01.10.2006թ./

ԻՐԱՎՈՒՆՔ Է ՍՏԱՆՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Ուժի մեջ է 07.04. 2007թ-ից:

Գործողության ժամկետը՝ մինչև 07.05. 2008թ.:

ՆԱԽԱԳԱՀ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՀՀԻ
AIISA
Միջազգային եւ անվտանգության
հարցերի հայկական ինստիտուտ
The Armenian Institute of
International and Security Affairs

Կորյունի 8 շ.,բն. 5, Երևան, 0009 ▪ Հեռ. (+374 10) 58-38-44, (374 91) 62 85 64 (բջջ) ▪ Էլ.փոստ՝ aiisa2014mahhi@gmail.com
Koryun 8 St., Apt. 5, Yerevan0009 ▪ Tel.: (+374 10) 58-38-44, (374 91) 62 85 64 (mob.) ▪ E-mail: aiisa2014mahhi@gmail.com

ք. Երևան «29» հունիսի, 2022թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

Սույնով հավաստվում է, որ Սեդա Սերյոժայի Սաֆարյանը հանդիսանում է Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի (ՄԱՀՀԻ) սահմանադրական և պետաիրավական հարցերի ավագ փորձագետ, ինչպես նաև՝ 2015թ. փետրվարից ղեկավարում է Ինստիտուտի «Հանցավորություն, արդարադատություն և ներքին անվտանգություն» և «Դատաիրավական բարեփոխումներ» հետազոտական ծրագրերը:

Ինստիտուտի հետ Սեդա Սաֆարյանի աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորվել են ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակում:

Ստյոպա Սաֆարյան
Միջազգային և անվտանգության հարցերի
հայկական ինստիտուտ հիմնադրամի հիմնադիր և տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք. Երևան, Զարյան 7-2
Հեռ.՝ (+374 10) 600 701, 600 704
Հեռապատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am

№ 01/05.2/741-2022
«29» 06 2022թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ **Սեդա Սաֆարյանը** 1991 թվականի նոյեմբերի 8-ից հանդիսանում է փաստաբան, իսկ ՀՀ փաստաբանների պալատի անդամ դառնալուց հետո նրա փաստաբանական գործունեության թիվ 116 արտոնագրի գործողությունը կասեցված կամ դադարեցված չի եղել:

Սեդա Սաֆարյանը 2006-2007թթ. ՀՀ Վճռաբեկ դատարանում հանդես է եկել որպես հավատարմագրված փաստաբան: 2008-2010թթ. եղել է ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի անդամ:

Սույն տեղեկանքը տրվում է ներկայացնելու ըստ պահանջվող վայրի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ
Սիմոն Բաբայան

ԵԱՔԴ/0138/06/12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԱՔԴ/0138/06/12
Նախագահող դատավոր՝ Ա.Պետրոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

| | |
|---|---|
| նախագահությամբ | Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ դատավորներ | Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ |
| | Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ |
| | Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ |
| | Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ |
| | Ս.ՕՀԱՆՅԱՆԻ |
| քարտուղարությամբ | Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ |
| մասնակցությամբ պաշտպան | Ս.ՍԱՖԱՐՅԱՆԻ |

2012 թվականի դեկտեմբերի 5-ին Երևան քաղաքում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշման դեմ մեղադրյալ Դավիթ Գրիգորի Ալիխանյանի պաշտպան Ս.Սաֆարյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

1. 2012 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունում հարուցվել է թիվ 90153012 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Scanned by TapScanner

Գործ ԱՎԴ1/0085/01/12

# Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ
## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ.

դատավոր՝ Հ.Պետրոսյանի
քարտուղարությամբ՝ Ա.Հովսեփյանի
Մ.Սարգսյանի
մասնակցությամբ.

մեղադրողներ՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազ՝ Ա.Երիցյանի
Արարատի մարզի դատախազության դատախազ՝
Դ.Մնացականյանի
Արարատի մարզի դատախազի տեղակալ՝
Ա.Կարապետյանի
քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչներ՝
Տիգրան Հակոբյանի
Անդրեաս Սարգսյանի
ամբաստանյալներ՝ Նորիկ Սարգսյանի
Մարինե Գրիգորյանի
պաշտպան՝ Մեղա Սաֆարյանի

2019թ. սեպտեմբերի 5-ին Արտաշատ քաղաքում

դռնբաց դատական նիստում, ընդհանուր կարգով քննելով քրեական գործն ըստ մեղադրանքի՝

Նորիկ Աշոտի Սարգսյանի՝ ծնված 29.07.1983թ. Կոտայքի մարզի Գառնի գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին մեկ անձ, նախկինում չդատված, բնակվում է

նախնական կալանքի տակ է գտնվել 2012 թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 11-ը, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ կատարելու մեջ: Դատարանի 11.12.2014թ. որոշմամբ ամբաստանյալ Նորիկ Աշոտի Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխվել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին,

Մարինե Նիկողայոսի Գրիգորյանի ծնված 16.09.1987թ. Կոտայքի մարզի Գառնի գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, նախկինում չդատված, չի աշխատում, բնակվում է

Scanned by TapScanner

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝
Նախագահությամբ՝ դատավոր Գ.Բալյանի
Քարտուղարությամբ՝ Հ.Մակարյանի
Մասնակցությամբ՝ հակընդդեմ հայցվորի ներկայացուցիչ,
փաստաբան Գ.Պողոսյանի
հակընդդեմ պատասխանողի ներկայացուցիչ,
փաստաբան Ս.Սաֆարյանի

2022թ.-ի մայիսի 24-ին, Վեդի քաղաքում, դատարանում, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն՝ ըստ հակընդդեմ հայցի՝ <<Սիդ Շին>> ՍՊ ընկերության, Արմեն Պուշկինի Սահրադյանի ընդդեմ <<Արկոպա Աիշափ Շիրկետի Փանել Սանայի Անոնիմ>> արտադրական կազմակերպված տեղամասի՝ 23.02.2016 թվականի պարտքի մարման վերաբերյալ համաձայնագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին.

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ըստ հայցի <<Ակրոպա Աիշափ Շիրկետի Փանել Սանայի Անոնիմ>> արտադրական կազմակերպված տեղամասի ընդդեմ <<Սիդ Շին>> ՍՊ ընկերության, Արմեն Պուշկինի Սահրադյանի՝ 229.057,85 եվրոյին համարժեք դրամ գումարի և բանկային տոկոսների բռնագանձման պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի <<Սիդ Շին>> ՍՊ ընկերության, Արմեն Պուշկինի Սահրադյանի ընդդեմ <<Ակրոպա Աիշափ Շիրկետի Փանել Սանայի Անոնիմ>> արտադրական կազմակերպված տեղամասի ՝ 23.02.2016թ. պարտքի մարման վերաբերյալ համաձայնագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին 23.02.2018թ. վճիռ է կայացրել, ըստ որի.
<<<<Ակրոպա Աիշափ Շիրկետի Փանել Սանայի Անոնիմ>> արտադրական կազմակերպված տեղամասի ընդդեմ <<Սիդ Շին>> ՍՊ ընկերության, Արմեն Պուշկինի Սահրադյանի՝ 229.057,85 եվրոյին համարժեք դրամի և բանկային տոկոսների բռնագանձման պահանջների մասին հայցը մերժել:
<<Սիդ Շին>> ՍՊ ընկերության, Արմեն Պուշկինի Սահրադյանի ընդդեմ <<Ակրոպա Աիշափ Շիրկետի Փանել Սանայի Անոնիմ>> արտադրական կազմակերպված տեղամասի՝ 23.02.2016թ. պարտքի մարման վերաբերյալ համաձայնագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին հակընդդեմ հայցը մերժել:
Պետական տուրքերի հարցը համարել լուծված:
ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.03. և 18.10.2017թ.թ. որոշումներով ձեռնարկված հայցի ապահովման միջոցները վերացնել՝ սույն վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:>>:

2) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 20.07.2018թ. կայացրել է որոշում, ըստ որի.
<<1. <<Սիդ Շին>> ՍՊ ընկերության և Արմեն Սահրադյանի վերաքննիչ բողոքը բավարարել:
ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 23.02.2018 թվականի թիվ ԱՎԴ3/0167/02/17 քաղաքացիական գործով կայացրած վճիռը մասնակի՝ հակընդդեմ հայցը մերժելու մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
Չբեկանված՝ հայցը մերժելու մասով, վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով:>>:



Scanned by TapScanner

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/0480/02/20

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի 27.07.2020 թվականի
թիվ ԱՐԱԴ/0480/02/20 քաղաքացիական գործով որոշում
նախագահող դատավոր Ա.Մարգարյան

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը**
**(այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)**

նախագահությամբ դատավոր՝ Կ.Համբարձումյանի

2020 թվականի հոկտեմբերի 9-ին Երևան քաղաքում

գրավոր ընթացակարգով քննության առնելով թիվ ԱՐԱԴ/0480/02/20 քաղաքացիական գործով ըստ հայցի Էդուարդ Սողոմոնյանի ընդդեմ Գուրգեն Շահինյանի՝ գումարի բռնագանձման և վնասների հատուցման պահանջների մասին, ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.07.2020 թվականի՝ «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման դեմ Էդուարդ Սողոմոնյանի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը

# Պ Ա Ր Զ Ե Ց

**<u>1.Գործի դատավարական նախապատմությունը.</u>**

Դատարանի 06.03.2020 թվականի որոշմամբ Էդուարդ Սողոմոնյանի ընդդեմ Գուրգեն Սեբրոպի Շահինյանի՝ գումարի բռնագանձման և վնասների հատուցման պահանջների մասին հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի նույն օրվա «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ միջնորդությունը բավարարվել է և հայցագնի՝ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 1.632.000 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք է դրվել Գուրգեն Շահինյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա:

Դատարանի 01.06.2020 թվականի «Հայցի ապահովման միջոցը փոփոխելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ պատասխանող՝ Գուրգեն Շահինյանի ներկայացուցիչ՝ Աստղիկ Պապիկյանի միջնորդությունը բավարարվել է: Դատարանի 06.03.2020 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցը, այն է՝ հայցագնի՝ 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 1.632.000 ՀՀ դրամ գումարի չափով Գուրգեն Շահինյանին

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ՆԱԼԲԱՆԴՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*(Գանգատներ թթ. 9935/06 և 23339/06)*

## ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2015 թվականի մարտի 31

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Scanned by TapScanner

ՆԱԼԲԱՆԴՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

# Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հանդես գալով հետևյալ կազմով՝

Ջոզեփ Քասադևալ [Josep Casadevall], *նախագահող*,
Լուիս Լոպես Գերրա [Luis López Guerra],
Յան Շիկուտա [Ján Šikuta],
Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],
Ջոհաննես Սիլվիս [Johannes Silvis],
Վալերիու Գրիցկո [Valeriu Griţco],
Իուլիա Անտոանելլա Մոտոչ [Iulia Antoanella Motoc], *դատավորներ*,
և Մարիալենա Ցիրլի [Marialena Tsirli], *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*.

2015 թվականի մարտի 10-ին տեղի կայացած դռնփակ նիստում կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2006 թվականի փետրվարի 8–ին և 2006 թվականի մայիսի 10–ին՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի երեք քաղաքացիներ պրն. Բագրատ Նալբանդյանի («առաջին դիմումատու»), տկն. Նարինե Նալբանդյանի («երկրորդ դիմումատու») և տկն. Արևիկ Նալբանդյանի («երրորդ դիմումատու») ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 9935/06 և 23339/06 գանգատների հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երևանում գործող փաստաբան տկն. Ս. Սաֆարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուները, մասնավորապես, պնդել են, որ 2004 թվականի հունիս և հուլիս ամիսներին ոստիկանությունում ազատությունից զրկված լինելու ընթացքում նրանց հետ վատ են վերաբերվել, որ վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց բողոքների առնչությամբ արդյունավետ քննություն չի իրականացվել, որ առաջին և երկրորդ դիմումատուները զրկված են եղել արդյունավետ իրավաբանական օգնությունից և որ առաջին դիմումատուն ապօրինի զրկվել է Վճռաբեկ դատարանի մատչելիությունից:

4. 2009 թվականի հոկտեմբերի 20–ին գանգատներն ուղարկվել են Կառավարությանը: Քանի որ Հայաստանի Հանրապետության դատավորի պաշտոնը ներկայում թափուր է, Դատարանի նախագահը որոշել է դատավոր Յոհաննես Սիլվիսին

Scanned by TapScanner

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ՄՈՒՇԵՂ ՍԱՂԱԹԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*(Գանգատ թիվ 23086/08)*

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

20 սեպտեմբերի 2018թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

քրեական դատարանի 2008 թվականի [illegible]
նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնել:

Scanned by TapScanner

**Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos]՝ *Նախագահ*,

Քրիստինա Պարդալոս [*Kristina Pardalos*],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Թիմ Այքը [Tim Eicke]՝ *դատավորներ*,

Սիրանուշ Սահակյան [Siranush Sahakyan]՝ *ad hoc* (*ժամանակավոր*) *դատավոր*,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար*,

2018 թվականի օգոստոսի 28-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Մուշեղ Սաղաթելյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2008 թվականի ապրիլի 22-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 23086/08) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ պրն Վ. Գրիգորյանը եւ տկն Ս. Սաֆարյանը: Հայաստանի Հանրապետության

Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործում

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ բաժին) նիստը, որը բաղկացած է.

Նախագահող՝ Ժոզեֆ Կասադեվալ
Դատավորներ՝ Ալվինա Գյուլումյան
Էգբերտ Միջեր
Ջան Սիկուտա
Ինետա Զիեմել
Լուիս Լոպես Գուերա
Քրիստինա Պարդալոս

և բաժնի ղեկավար՝ Սանտիագո Կուեսադա

2012թ. մայիսի 22-ին գաղտնի քննարկելով, կայացնում է հետևյալ վճիռը, որն ընդունվել է այդ նույն օրը.

## ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Գործը սկիզբ է առել N 22999/06 դիմումում ընդդեմ Հայաստանի Հանրապետության, այն ներկայացվել է Դատարան Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Կոնվենցիայի («Կոնվենցիա») 34 Հոդվածի համաձայն 2006թ. մայիսի 16-ին ազգությամբ երկու հայերի կողմից՝ պրն. Արմեն Պողոսյանի և տիկին Անահիտ Բաղդասարյանի կողմից («դիմողներ»):
2. Դիմողներին ներկայացրել է Երևանում գործող փաստաբան տիկին Ս. Սաֆարյանը: ՀՀ կառավարությանը («Կառավարություն») ներկայացրել է իրենց գործակալ պարոն Գ. Կոստանյանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ-ի ներկայացուցիչը:
3. Դիմող Պողոսյանը («առաջին դիմող») մասնավորապես պնդում է, որ ոչ մի փոխհատուցում իր՝ ոչ նյութական վնասի դիմաց չի տրվել իր նկատմամբ կոպիտ վերաբերմունքի, անօրինական ձերբակալության և կալանավորման, ինչպես նաև անարդարացի դատապարտման համար:
4. 2008թ. նոյեմբերի 20-ին կառավարությունը տեղեկանում է դիմումի մասին: Միաժամանակ որոշվում է նաև կառավարել գանգատի ընդունելությունն ըստ էության:

## ՓԱՍՏԵՐ

### I ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմողները ծնվել են համապատասխանաբար 1976 և 1932 թ.թ. և ապրում են ՀՀ Սարատովկա գյուղում:
6. Դիմողները մայր և որդի են:

Scanned by TapScanner

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ (ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան 04.08.2016թ.

„Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն„ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Ա.Արզումանյանի (այսուհետ ՝ Պատվիրատու) մի կողմից և Ա/Ձ <Սեղա Սաֆարյան>> փաստաբանական գրասենյակը, ի դեմս՝ Սեղա Սաֆարյանի (այսուհետ՝ Կատարող)՝ մյուս կողմից, (հետագայում միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (հետագայում՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրի 1.2-րդ կետում նշված իրավաբանական ծառայությունները, իսկ Պատվիրատուն՝ վճարել դրանց դիմաց՝ Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:

1.2. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել թիվ ԵԿԴ 5066/02/14 և ԵԿԴ/2618/02/16 քաղաքացիական գործերով փաստաբանական ծառայություն պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով:

### 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

**2.1.Պատվիրատուն պարտավոր է.**

2.1.1.Ժամանակին ապահովել կատարողին տվյալ ծառայության մատուցման հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով և ծառայության մատուցման համար անհրաժեշտ այլ միջոցներով.

2.1.2.Կատարել տվյալ ծառայության մատուցման հետ կապված կատարողի բոլոր խորհուրդները և պահանջվող բոլոր գործողությունները

2.1.3.Պայմանագրով նախատեսված գործողությունների կատարման համար անհրաժեշտության դեպքում կատարողին տալ ծառայությունը անմիջականորեն մատուցող անձի անունով լիազորագիր

**2.2.Կատարողը պարտավոր է .**

2.2.1. Գաղտնի պահել պատվիրատուի կողմից հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տարբեր բնույթի տեղեկությունները, որոնք պարունակում են փաստաբանական գաղտնիք.

2.2.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել ծառայության մատուցման ընթացքի մասին տեղեկություններ.

2.2.3. Բարեխղճորեն իրականացնել Պայմանագրով ստանձնած պարտականությունները

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել վճարում.

2.3.2. Պատվիրատուից պահանջել ծառայություններին վերաբերող համապատասխան տեղեկություններ.

2.3.3. Ծառայությունները չսկսել, իսկ սկսած ծառայությունները դադարեցնել (այդ մասին նախապես մինչեւ ծառայությունների դադարեցումը 10 (տաս) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելով Պատվիրատուին) այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով իր պարտավորությունները խախտելը խոչընդոտում են պայմանագրի կատարմանը.

2.3.4. ինքնուրույն որոշել ծառայությունների մատուցման ընթացքը և եղանակները՝ հաշվի առնելով Պատվիրատուի շահերը,

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

### 3. Ծառայության գինը և վճարման կարգը

3.1.Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար, Պատվիրատուն պարտավոր է Կատարողին վճարել որպես ծառայության վճար՝ ./ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

3.2. Պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները պետք է կատարվեն հետևյալ ժամկետում.

ա/ Պայմանագիրը ստորագրելուց հետո 3 /երեք/ օրվա ընթացքում փոխանցվում է գումարը

Scanned by TapScanner

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ # 06

ք. Երևան «01» մարտի 2018 թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղը, հետագայում անվանվող « ՊԱՏՎԻՐԱՏՈՒ», ի դեմս Լարիսա Մինասյանի մի կողմից և Սեդա Սաֆարյանի մյուս կողմից, հետագայում անվանվող « ԿԱՏԱՐՈՂ» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## *1. Պայմանագրի առարկան*

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները ըստ կցված հավելված 1, այսուհետ՝ «Ծառայություններ»:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է՝ «01» մարտի 2018 թ. մինչև «31» դեկտեմբերի 2018 թ.: Կատարողն իրավունք ունի աշխատանքներն ավարտել ժամկետից շուտ:

1.3.1. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցիչների կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

## *2. Կողմերի իրավունքները և պարտականությունները*

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում.

2.1.3. Պատվիրատուի պահանջով 30 (երեսուն) օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.4. անձամբ կատարել Ծառայությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունները վճարել սույն պայմանգրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից 10 (տասը) օրվա ընթացքում.

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

Ս.Ս.

Scanned by TapScanner

**6.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ
## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԱՐԴ 1/0003/11/08

ԱՐԴ 1/0003/11/08

նախագահող դատավոր՝ Հ. Տեր–Աղամյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝* Դ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

*մասնակցությամբ դատավորներ՝* Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ
Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ

*տուժողի իրավահաջորդ* Ն. ՄԻՍԱԿՅԱՆ
*տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ* Ս. ՍԱՖԱՐՅԱՆ

*դատախազներ* Ն .ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 ապրիլի 2009 թվական — ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 25–ի որոշման դեմ տուժողի իրավահաջորդ Ներսես Միսակյանի և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանի բերած վճռաբեկ բողոքը,



Scanned by TapScanner

# Դատական գործերի ցանկ

| գործի համար | ստացման ամսաթիվ | Դատական ակտի ամսաթիվ | դատական գործի տևողություն |
|---|---|---|---|
| ԿԴ1/0791/02/10 | 12.10.2010 | 22.11.2010 | 1 ամիս, 10 օր |
| ՎԴ/1958/05/12 | 03.07.2012 | 20.07.2012 | 17 օր |
| ՎԴ/9144/05/11 | 26.12.2011 | 22.08.2013 | 1 տարի, 7 ամիս, 27 օր |
| ՏԴ1/0192/02/11 | 29.07.2011 | 30.09.2011 | 2 ամիս, 1 օր |
| ԿԴ2/0220/02/13 | 29.07.2013 | 24.12.2013 | 4 ամիս, 25 օր |
| ԿԴ1/0565/02/13 | 10.06.2013 | 29.11.2013 | 5 ամիս, 19 օր |
| ԿԴ1/0939/02/12 | 24.12.2012 | 22.03.2013 | 2 ամիս, 26 օր |
| ԿԴ1/0876/02/12 | 30.11.2012 | 21.12.2012 | 21 օր |
| ԿԴ1/1715/02/15 | 01.10.2015 | 05.04.2016 | 6 ամիս, 4 օր |
| ԿԴ1/1413/02/15 | 04.08.2015 | 24.02.2016 | 6 ամիս, 20 օր |
| ԿԴ/1398/02/14 | 30.10.2014 | 24.07.2015 | 8 ամիս, 24 օր |
| ԿԴ/0071/02/14 | 19.02.2014 | 25.04.2014 | 2 ամիս, 6 օր |
| ԵԱԴԴ/4523/02/15 | 28.12.2015 | 04.04.2017 | 3 ամիս, 7 օր |
| ԵԱԴԴ/0176/02/11 | 21.02.2011 | 04.12.2012 | 1 տարի, 9 ամիս, 13 օր |
| ԵԱԴԴ/0173/02/11 | 21.02.2011 | 04.12.2012 | 1 տարի, 9 ամիս, 13 օր |
| ԵԷԴ/3469/02/15 | 06.10.2015 | 08.09.2016 | 11 ամիս, 2 օր |
| ԵԷԴ/1184/02/11 | 30.08.2011 | 17.09.2013 | 2 տարի, 0 ամիս, 18 օր |
| ԵԱՔԴ/4402/02/14 | 23.10.2014 | 06.03.2015 | 4 ամիս, 11 օր |
| ԵԱՔԴ/3180/02/14 | 27.08.2014 | 30.06.2016 | 1 տարի, 10 ամիս, 3 օր |
| ԵԱՔԴ/3179/02/14 | 13.08.2014 | 22.04.2015 | 8 ամիս, 9 օր |
| ԵԱՔԴ/2496/02/13 | 12.11.2013 | 23.07.2015 | 1 տարի, 8 ամիս, 11 օր |
| ԵԱՔԴ/1577/02/13 | 24.08.2013 | 12.11.2013 | 2 ամիս, 19 օր |
| ԵԱՔԴ/0323/02/13 | 27.02.2013 | 31.10.2013 | 8 ամիս, 4 օր |
| ԵԱՔԴ/2272/02/12 | 29.11.2012 | 31.05.2013 | 6 ամիս, 2 օր |

| | | | |
|---|---|---|---|
| ԵԱՔԴ/2270/02/12 | 29.11.2012 | 29.03.2013 | 4 ամիս, 0 օր |
| ԵԱՔԴ/1793/02/12 | 03.10.2012 | 21.02.2013 | 4 ամիս, 18 օր |
| ԵԱՔԴ/0845/02/11 | 16.05.2011 | 17.08.2011 | 3 ամիս, 1 օր |
| ԵԿԴ/1250/02/14 | 05.05.2014 | 03.02.2015 | 8 ամիս, 29 օր |
| ԵԿԴ/0565/02/14 | 10.03.2014 | 13.09.2016 | 2 տարի, 6 ամիս, 3 օր |
| ԵԿԴ/1295/02/13 | 10.06.2013 | 20.09.2013 | 3 ամիս, 10 օր |
| ԵԿԴ/0088/02/12 | 19.01.2012 | 20.03.2012 | 2 ամիս, 1 օր |
| ԵԿԴ/1301/02/11 | 27.06.2011 | 18.09.2012 | 1 տարի, 2 ամիս, 22 օր |
| ԵՄԴ/0339/02/15 | 13.02.2015 | 24.06.2015 | 4 ամիս, 11 օր |
| ԵՄԴ/2957/02/14 | 12.11.2014 | 17.04.2015 | 5 ամիս, 5 օր |
| ԵԱՆԴ/5701/02/15 | 30.12.2015 | 20.05.2016 | 4 ամիս, 20 օր |
| ԵԱՆԴ/5121/02/15 | 27.11.2015 | 29.12.2015 | 1 ամիս, 2 օր |
| ԵԱՆԴ/4829/02/15 | 14.12.2015 | 06.04.2016 | 3 ամիս, 23 օր |
| ԵԱՆԴ/4041/02/14 | 24.10.2014 | 06.03.2015 | 4 ամիս, 10 օր |
| ԵԱՆԴ/3573/02/14 | 19.09.2014 | 07.11.2014 | 1 ամիս, 19 օր |
| ԵԱՆԴ/3416/02/14 | 08.09.2014 | 30.12.2014 | 3 ամիս, 22 օր |
| ԵԱՆԴ/2277/02/14 | 14.07.2014 | 05.03.2015 | 7 ամիս, 19 օր |
| ԵԱՆԴ/1058/02/14 | 30.04.2014 | 19.06.2014 | 1 ամիս, 20 օր |
| ԵԱՆԴ/0192/02/09 | 27.02.2009 | 23.08.2011 | 2 տարի, 5 ամիս, 27 օր |
| ԵԱՆԴ/1949/02/13 | 29.11.2013 | 18.02.2014 | 2 ամիս, 20 օր |
| ԵԱՆԴ/1848/02/13 | 08.11.2013 | 30.01.2014 | 2 ամիս, 22 օր |
| ԵԱՆԴ/0979/02/13 | 19.06.2013 | 10.02.2015 | 1 տարի, 7 ամիս, 22 օր |
| ՏԴ/0037/01/08 | 20.03.2008 | 28.04.2008 | 1 տարի 8 օր |
| ԵԱՆԴ/0070/01/10 | 28.06.2010 | 02.08.2010 | 1 ամիս 5 օր |
| ԵԱԴԴ/0039/01/12 | 27.03.2012 | 06.08.2014 | 2 տարի 4 ամիս, 10 օր |
| ԵԷԴ/0093/01/13 | 19.06.2013 | 26.02.2014 | 8 ամիս, 7 օր |
| ԵԱԴԴ/0060/01/14 | 09.03.2015 | 01.06.2016 | 1 տարի 2 ամիս, 23 օր |
| 1-2/2005թ | 04.02.2005թ. | 08-02-2006թ. Գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ | 1 տարի 4 օր |

| | | | |
|---|---|---|---|
| 2-730/07 | 09.02.2007թ. | 07.06.2007թ. | 3 ամիս. 29 օր |
| ՎԲ-67/07 | 21.11.2006թ. | 04.05.2007թ. | 5 ամիս, 13 օր |
| ՎԲ-59/07 | 30.06.2006թ. | 30.03.2007թ. | 9 ամիս |
| ԵԷԴ/0022/01/08 | 01.04.2008թ. | 16.06.2008թ. | 2 ամիս, 15օր |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

Փաստաբանական գործունեության
Արտոնագիր N 116

# ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ

Лицензия N 116
на право адвокатской деятельности

# СЕДА САФАРЯН

License N 116
of advocate's activity

# SEDA SAFARYAN

Տրված է անժամկետ
Выдано бессрочно
Is given for unlimited time

Նախագահ — Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ
Председатель — Р. СААКЯН
President — R. SAHAKYAN

01.10.2006

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սեդա Սերյոժայի Սաֆարյանը

/անուն, հայրանուն, ազգանուն/

Անձը հաստատող փաստաթուղթ՝ ______, տրված՝ ______ը կողմից

/սերիա, համար/ /ամսաթիվ և ում կողմից/

վերջին չորս տարում հանդիսանում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և վերջին չորս տարում մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում:

**ՀՀ ոստիկանության անձնագրային և**
**վիզաների վարչության պետ,**
**ոստիկանության գնդապետ**
**Ա. Մկրտչյան**

/ստորագրություն/

Կ.Տ.

«28» հունիսի 2022թ.

N 8-50812